ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ II

Իզմիրլեանը հաստատուած Ամենայն Հայոց Կաթողիկոս

Հեռագիրը ամսոյս 8-ից հաղորդում է Ս. Պետերբուրգից, որ Թագաւոր Կայսրը բարեհաճել է բարձրագոյնս հաստատել Ազգից ընտրուած Տ. Տ. Մատթէոս արքեպիսկոպոսին Ամենայն Հայոց Կաթողիկոս։

Վերջապէս Լուսաւորչի Աթոռը մի և կէս տարի թափուր մնալուց և բաղդի ձեռքին խաղալիք լինելուց յետոյ՝ ստացաւ իւր արժանաւոր գահակալը և Հայոց եկեղեցին իւր Ծայրագոյն պետը։

Ողջունելով նորընտիր Հայրապետի հաստատութիւնը, մաղթում ենք Նորին Օրբութեան բարի գալուստ և լիուլի առողջութիւն՝ ընդ երկայն աւուրս բարերջանկութեամբ հովուելու Հայաստանեայց ս. Եկեղեցին ու նորա բազմակարօտ հօտը։

ԵՒՐՈՊԱՆ ԹԻՒՐՔԻԱՑՈՒՄ

Մինչդեռ մեր լրագիրների պոռոտախօս թղթակիցները Պոլսից գրում էին, որ Թիւրքիայում հին կարգերը շարունակւում են և Հայերը ինքնավարութիւն չեն ստացել, թէպէտ քաղաքական գործերի հետաքննութեամբ զբաղուելը պիտի լաւ իմանար, որ Թիւրքիայի յեղափոխութիւնը չէր կարող մի ակնթարթում արմատապէս փոփոխել հին կարգերը, ահա Պոլսի վերջին հեռագիրները գալիս են ապացուցանելու վերոյիշեալի ճշմարտութիւնը։